7287

91 (075)
S - 44

188

1866

2199

[illegible] 26
[illegible] 97

# ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

# ՊԱՏԿԵՐԱՀԱՆԴԷՍ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿ

ՀԱՅ ՏՂԱՅՈՑ ԵՒ ՕՐԻՈՐԴԱՑ ՀՈԳԵՒՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

№ 1354



Ղպտի Եգիպտոսից·

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ

ԱՒԵՏԻՔ ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ

ՕՐԲԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ, Տ 1-2

1885

13184

004
4
Հ 1156
41

Дозволено цензурой. Тифлисъ. 14 Ноября 1884 г.






## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Տեսութեան զգայարանով ստացած մտապատկերները աւելի ճիշտ, զօրեղ և յարատև են, քան բոլոր միւսներով ստացածները: Մանկական հասակում տեսութեան զգայարաննէ այն գլխաւոր միջնորդը, որով արտաքին երական աշխարհը վերափոխվումէ ներքին հոգեկան աշխարհը, ուստի սկզբնական կրթութեան ժամանակ աւանդելի առարկաների հիմք պէտք է ծառայէ առարկայի անմիջապէս զննողութիւնը, իսկ առարկայի բացակայութեան ժամանակ նորա պատկերները: Առարկան կամ նորա պատկերը պէտքէ աշակերտի անմիջապէս տեսութեան ենթակայ կացուցանել և թոյլ տալ, որ նա իւր սեփական զննողութեամբ, ուսուցչի ղեկավարութեամբ գայ այն հասկացողութեան, որը ուսուցիչը կամենումէր երբև պատրաստ նիւթ ինքը հաղորդել:

Եւրոպական ուսումնարաններում բոլոր առարկաների ստորին շրջանը աւանդվումէ վերոյիշեալ նկատողական կամ զննողական մեթոդով: Այդ նպատակով ծառայումէն պատկերների հարուստ ժողովածուներ լեզուի, թուաբանութեան, երկրաչափութեան, բնական գիտութեան, պատմութեան, աշխարհագրութեան և այլ առարկաների համար: Ահա այս նպատակով ես լոյս եմ ընծայում այս աշխարհագրական պատկերների ժողովածուն «Պատկերահանդէս աշխարհագրական», աշխարհագրութեան դասատուութիւնը թէ ստորին և թէ միջին շրջանում տեսանելի և նկատողական կացուցանելու համար:

I ՏԱՐՐԱԿԱՆ ՈՒ ՈՒՄՆԱՐԱՆՆԵՐՈՒՄ. դասի ժամանակ պատկերահանդէսը գտանվումէ աշակերտաց առաջ. ուսուցչի նշան տալով բացեն անում այն ժողովրդական տիպը, որի վերայ ուսուցիչը պէտքէ խօսէ: Ուսուցիչը պատմումէ այդ ազգի մասին, տեսքի, բնաւորութեան, սովորութեան, ընտանեկան կեանքի, պարապմունքի, կրօնի ևայլն (ժողովրդագրական աշխարհագրութիւն:) Ժողովրդի մասին խօսելուց յետոյ համառօտօրէն ծանօթացնումէ նորա բնակած երկրի հետ քարտէզով դիրքի, մակերևոյթի, ջրերի, կլիմայի, բոյսերի, կենդանիների (ֆիզիքական աշխարհագրութիւն) և յետոյ ամենագլխաւոր քաղաքների (քաղաքական աշխարհագրութիւն:) Նիւթի ընտրութիւնը կախուածէ ուսումնարանի հանգամանքներից, ուստի թողումեմ ուսուցչի կամքին: Պէտքէ խուսափել միանգամայն աւելորդ, տաղտկացուցիչ և անօգուտ քաղաքների, լեռների, գետերի, անուններից և դոցա փոխարէն աւելի զբաղուել բուն ժողովրդով:

II ՄԻՋՆԱԿԱՐԳ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐՈՒՄ. Մինչև այժմ գոյութիւն ունեցող աշխարհագրական ձեռնարկներում խօսվումէ զանազան երկրների և նոցա բնակչաց մասին. միայն նկարագրութիւններով աշակերտը չէ կարողանում ճիշտ գաղափար կազմել այդ երկրների բնակչաց տիպերի մասին, նա սկսումէ իւր երևակայութեան մէջ այնպիսի տիպեր ստեղծել, որոնք իրականից շատ հեռու և սխալ են, բայց շարունակումեն գոյութիւն ունենալ մինչև վերջը նորա մտքում։ Այսպիսի դէպքերում Եւրոպական ուսումնարաններում օգնութիւն են գալիս բազմաթիւ աշխարհագրական պատկերներ, որոնք իւրեանց թանկութեան պատճառով անմատչելի են հայ տղայոց։ Հայ աշակերտներին սխալ մտապատկերներ կազմելուց ազատելու և ուսումնարանական այդ պակասը լրացնելու համար լոյս եմ ընծայում այս պատկերահանդէսը, որ պէտք է իւրաքանչիւր աշակերտ ունենայ ինչ ձեռնարկով ևս աշխարհագրութիւն անցնելիս լինի։

Պատկերահանդէսի բոլոր պատկերները բուն ժողովրդական տիպեր են հանած լուսանկարով, կամ նկարած աշխարհաշուրջ գիտնական ճանապարհորդների ձեռով, պատրաստուած Փարիզի, Բեռլինի, Վիէննայի, Պետերբուրգի ամենայայտնի աշխարհագրութեան պրոֆէսսորների և նկարիչների շնորհիւ։ Միքանի պատկերներ վերցրածեմ Պուցխովէրի, Հիրտի, Լաիկտէի, Ցիմերմանի գրքերից։ Որքան կամեցայ պատկերահանդէսը կատարեալ կացուցանել այնուամենայնիւ ինձ անկարելի եղաւ միքանի ժողովրդական տիպեր ձեռք բերել, որոնց լրացնելը թողնումեմ երկրորդ տպագրութեան։

Բեռլին 1884 ամի Ալէքս. Տէր-Յովհաննէսեանց

## ՀԱՄԱՌՕՏ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

### ՄԻ ՔԱՆԻ ԲՈՅՍԵՐԻ ԵՒ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԵՏ

ԱՍԻԱՅԻ ԲՈՅՍԵՐԸ ՈՒ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ. (Երես XII.) 1. Բանան. խոտային բոյսէ, բարձրութեամբ ծառի չափ. դորա քաղցր պտուղները ուտումեն հացի տեղ, հում եփած կամ խորոված։ Բանանը կազմում է ջերմ երկրների բնակչաց գլխաւոր կերակուրը։ 2. Սագոյի արմաւ. բարձր և հաստ ծառ է, մէջը թանձր և փափուկ սոսնձանման նիւթով լիքը, որից կերակուր են պատրաստում։ 3. Հնդկարմաւ. ծառ է մօտ 200 ոտնաչափ բարձրութեամբ. վերևից պսակաձև տերևներով է պատած. պտուղները ընկուզաձև են լիքը իւղալի կաթով։ 4. Հովանոցային արմաւ. մօտ 30 ոտնաչափ բարձրէ. տերևները մի սաժէն երկայն են, որից գործումեն պարկեր, կողովներ, ցանցեր, գլխարկներ. շինում են խրճիթի ծածկոցներ։ 5. 6. Բամբուկ. սորա շատ տեսակներն է լինում. ամենատարածուածը թփաձևնէ (5)· մի արմատից դուրս է գալիս միքանի ցողուն (6) կամ բուն մարդու հաստութեամբ մօտ 50 ոտնաչափ բարձրութեամբ։ Դորա պտուղները և մատաղ ճիւղերը տեղական բնակչաց սիրելի կերակուրնէ, փայտը գործ են դնում տան կարասիի և այլ բաներ շինելու համար։ 7. Պանդան. տաք երկրների բարձրահասակ ծառերիցնէ. նորա տերևներից զանազան բաներ են հիւսում, իսկ պտուղները, որ երեխայի գլխի չափէ, կերակրի տեղեն գործածում։ 8. Շաքարի եղէգն. սորա հայրենիքը հարաւային Ասիանէ. մօտ 20 ոտնաչափ բարձրութեանէ հասնում, սորա ծղօտից քամումեն քաղցր հիւթ, որից շաքար են շինում։ 9. Սուրճի ծառ. յաւիտեան կանաչէ. մօտ 50 ոտնաչափ բարձրութիւն ունի. պտուղի մէջ երկու փոքր հատիկներ կան, որից սուրճ են պատրաստում. 10. Թզենի հնդկային. ահագին ծառէ. մօտ 200 ոտնաչափ բարձրութեամբ. սորա ճիւղերից օդի մէջ արձակվում են արմատներ, որոնք ցած իջնելով մտնում են գետին և նորից ցողուններ են արձակում, այնպէս որ մի ծառը դառնումէ մի ահագին անտառ, որի տակ 5000 մարդ կարողէ կանգնել. 11. Թէյ. աճումէ ծառի կամ թփի ձևով. տարին երեք անգամ դորա տերևները հաւաքում են չորացնում են, այդ չորացրած տերևներից պատրաստում են խմելու թէյը։

1. Տապիր կամ ջրային խոզ։ 2. Արջ. բնակվումէ աւելի անտառներում. ցերեկը հանգստանումէ գիշերը որսի դուրս գալիս. յարձակվումէ ոչխարների, արջառների և ձիաների վերայ. խիստ անօթութիւնից և մարդոց վերայ. ամենասիրելի կերակուրը մեղրնէ, միսը ուտումեն, մորթից մուշտակ շինում։ 3. Մօրուքաւոր խոզիկ. մեծ կատուի չափէ. սև գոյն ունի, երկայն մօրուք. 4. Փիղ։ Կէտ ձկնից յետոյ ամենամեծ և խելացի կենդանինէ. կերակրվումէ սովորաբար հացաբոյսերով. փղերը ապրումեն ահագին խմբերով. շատ շուտով ընտելանում են. ընտանի փղերը կատարումեն ամեն տեսակ տնային աշխատութիւններ։ 5. Առիւծ. մեծ յափշտակող կենդանիէ մօտ 4 ոտնաչափ երկայնութեամբ։ 6. Վագր. մեծ կատուի ձև ունի. յափշտակող արիւնարբու գազանէ. Ասիաում վագրնէ համարվում կենդանեաց թագաւոր. Ասիայի առիւծը թոյլէ. մի խփելով մարդուն կարողէ սպանել. նոյն իսկ ցերեկով մտնումէ գիւղերը ու մարդ յափշտա-

կում: 7. Ռնգեղջիւր. մեծ հաստամորթ կենդանի է. ռունգի վերայ մէկ կամ երկու եղջիւր ունի. բնութեամբ խիստ կատաղի է. ապրում է ճահճային տեղերում. կերակրվում է բոյսերով. սորա միսը գործ է դրվում իբրև կերակուր. եղջիւրներից զանազան բաներ են շինում. կաշիից վահան, ախտ և այլն։ 8. Քաշմիրի այծ. փոքրիկ ընտանի կենդանի է, սպիտակ արծաթի գոյն ունի. սորա բրդից շինումեն ամենանուրբ, բրդեայ զանգուածներ, իսկ չափազանց բարակ, փափուկ, մետաքսանման խաւից ամենաթանկագին շալեր ամեն մէկը 1000 ռուբլի արժողութեամբ։ 9. Կոկորդիլոս։ 10. Երկսապատանի ուղտ. ընտանի կենդանի է. երկու սապատ ունի. կերակրվում է բուսեղէններով. կարող է շատ երկար ծարաւ և սոված ապրել. ասիական վաճառականութեան մեծ մասը ուղտով է կատարվում. միսը կոշտ է, բայց էլի ուտվում է. կաթը թանձր և շատ իւղալի է, թանձր. սորա բրդից զանազան բաներ են գործում: 11. Անգորայի այծ. մեծ և սիրուն կենդանի է. Ասիան դորա հայրենիքն է. յայտնի է իր մետաքսանման փափուկ և ընտիր բրդով. սորանից շինումեն ամենաընտիր մահուդ. ձեռնոցներ, գուլպէք և այլն։

ԱՖՐԻԿԱՅԻ ԲՈՅՍԵՐԸ ԵՒ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ (երես XIII) 1. Ձիթենի արմաւ. ծառ է միջակ բարձրութեամբ. սորա ընկուզաձև պտուղներից ստացվում է իւղ. Աֆրիկայում վաճառականութեան մեծ առարկայ է։ 2. Փիւնիկեան արմաւ. մօտ 80 ոտնաչափ բարձրութիւն ունի. գտնվում է Ասիայում և Աֆրիկայում, ծառի բնից շինումեն կարասիքներ, պտուղները իբրև կերակուր են գործածում. 3. Հալուէ. գտնվում է աւելի Աֆրիկայում. դորանից ստացվում է փայլուն խէժ և չափազանց դառը հիւթ, որ դեղի տեղ է գործածվում։ 4. Աֆրիկացւոց բնակարանը. 5. Նոցա շտեմարանը։ 6. Ջրաղաց։

1. Կոկորդիլոս. Նման է խիստ մեծ մողէսի. շատ ագահ և օրկրամոլ կենդանի է. 30 ոտնաչափ երկայնութիւն ունի, ծածկուած է կարծր թեփով. բացի Եւրոպայից գտնվում է աշխարհի բոլոր մասերում. Աֆրիկայինը ամենամեծն է. խժռում է ոչ միայն կենդանիներ այլ և մարդոց։ 2. Վիշապ օձ. 3. Ջայլամ. թռչուն է. մէկուկէս սաժէն բարձրութիւն ունի. թռչել չէ կարող, բայց վազում է խիստ արագ. գտնվում է միայն Աֆրիկայում. Նորա ագի և թևերի փետուրները ծառայումեն իբրև կանանց գլխարկների ամենաընտիր զարդ. 4. Գորիլլա. ամենամեծ և զօրեղ կապիկն է. 5 ոտնաչափ բարձրութիւն ունի. ձեռքերը խիստ մեծ են. ագի չունի. կերակրվում է պտուղներով. բնակվում է անտառներում. Աֆրիկայի արևմտեան կողմերը։ 5. Առիւծ. բոլոր գազանների թագաւորն է. յափշտակող է. Աֆրիկայի առիւծը ամենից մեծն է, զօրեղը և վտանգաւորը. չափազանց մեծ ոյժ ունի. ամենամեծ կենդանիներն էլ նորան զոհ են գնում։ 6. Զեբր. ձիու տեսակիցն է. գեղեցիկ շերտաւոր կենդանի է. բնակվում է միայն Աֆրիկայում, կերակրվում է բոյսերով. մինչև այժմ դեռ չեն կարողացել ընտելացնել։ 7. Ձիագետ. խիստ անճոռնի կենդանի է. Նման է խոզերին. գտնվում է Աֆրիկայում. համարեա միշտ ջրումն է ապրում, միայն այնժամանակ է ցամաք դուրս գալիս, երբ ջրի մէջ նորա կերակրվելու համար պակասումեն ջրաբոյսերը. ձիագետին բարկացած ժամանակ խիստ վտանգաւոր է, մանաւանդ որ նորա սպանելը շատ դժուար է. որովհետև ծածկուած է խիստ հաստ կաշուով. միսը և ճարպը շատ համով է և թանկէ գնահատվում։ 8. Բորենի. տգեղ, չար և վախկոտ կենդանի է. հասակաւորների վերայ երբէք չէ յարձակվում, բայց երեխաներ փախցնում է շատ յաճախ. սովորաբար կերակրվում է փոքր կենդանիներով և դիակներով. 9. Միասապատ ուղտ. ապրում է այնպէս, տալիս է նոյն օգուտը ինչ որ երկսապատանին. բայց սա միայն Աֆրիկայում է ապրում. Ասիայի միայն ամենաարևմտեան մասում է գտնվում Աֆրիկային սահմանակից երկրներում։ 10. Փիղ. 11. Ընձուղտ. համեստ, կենդանի է. պարանոցը և ոտները խիստ երկայն են, կերակրվում է համարեա բացառապէս բոյսերով, գտնվում է միայն Աֆրիկայում. շատ շուտով ընտելանում է. միսը գործածվում իբրև կերակուր, իսկ կաշիից զանազան բաներ են շինում։ 12. Երկեղջիւրանի ռնգեղջիւր:



ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ ԵՒ ԲՈՅՍԵՐԸ։ (երես XIV). 1. Աշտանակաձև չոչթուս. կակտուսի մի տեսակն է. 2. [illegible] արմաւ. գեղեցիկ ծառերից մէկն է. տերևներից տների ծածկոց են շինում. պտուղները մեծութեամբ սիսեռի չափ են և գործ են ածվում իբրև անասունների կերակուր։ 3. Մավրիցիա. ամենագեղեցիկ արմաւենիներից մէկն է. 100 ոտնաչափ բարձրութիւն ունի. գտնվում է հարաւային Ամերիկայում. ծառի միջուկը պարունակում է ալիւրի նման նիւթ. սորանից ինչպէս և Սագօ արմաւից շինումեն քաղցր հաբեցնող արմաւի գինի։ 4. Կաղամբային արմաւ. սորա պտուղներից ստացվում է թանձր կապոյտ սերի պէս բան։ 5. Շոկոլադի ծառ, մօտ 20 ոտնաչափ բարձր է. գտնվում է սովորաբար հարաւային Ամերիկայում. տերևները կազմումեն մի տեսակ վրան. պտուղները լոբու ձև ունին, որից պատրաստումեն շոկոլադ խմիչքը։ 6. Քինաքինայի ծառ. շատ բարձր է. հայրենիքը հարաւային Ամերիկան է. սորա կեղևը հաըթ է, խարտեաշ գոյն ունի, թթու դառնահամ է. սորանից պատրաստուած փոշին համարվում է ամենաընտիր դեղ ջերմի դէմ։ 7. Լիանա. սոքա փաթաթուող բոյսեր են. հաստութիւնը մի քանի բթաչափ է, իսկ երբեմն մարդաչափ. փաթաթվում և բարձրանում են ծառերի վրայ և նորից ճիւղերից դէպի ցած կախվում: 8. Բամբակ. ամենից լաւ բամբակը հիւսիսային Ամերիկայում է գտնվում. սորա պտուղների մէջ գտնվում է փափուկ սպիտակ խաւ, որից ստացվում է բամբակը։ 9. Ծխախոտ։ 10. 11. Կակտուս. փշոտ բոյս է. հայրենիքն է Ամերիկան. սորա շատ տեսակները կան. մի քանիսը հաղարջի պէս պտուղներ են տալիս. միւսները այրելու համար են գործ դնվում և այլն։

1. Տապիր. Խոշոր հաստակաշի կենդանի է. ունի կնճիթ և պարանոցի վրայ բաշ. գտնվում է սովորաբար Ամերիկայում թէև Ասիայումն էլ է պատահում. կերակրվում է բոյսերով, կենում է անտառներում. միսը գործ է ածվում իբրև կերակուր. մորթը թանկագին է։ 2. Վայրի ցուլ. սա ամերիկական գոմէշ է. գտնվում է հիւսիսային Ամերիկայի անապատներում. վայրի ցուլերը այդ տեղի ամենախոշոր կենդանիներն են, շրջումեն ահագին խմբերով. դոցանից ստացվում է չաղ և համեղ միս. մորթից շինումեն վրան, անկողին, շորեր, կաշիից թամբեր, գոտի, բրդից գործում են զանազան զանգուածներ։ 3. Պուման կամ ամերիկեան առիւծ. մութ դեղին կարմրագոյն է. 4 ոտնաչափ երկայնութեամբ. փոքրիկ գլխով. ճարպիկ է և ուժեղ, մեծ ցատկոյտներ է անում. կերակրվում է կենդանիներով, մանաւանդ արիւն է սիրում. շատ անգամ միանգամից սպանում է մի քանի տասնեակ կով կամ ոչխար արիւնը ծծելու համար. տեղացիք ուտումեն դորա միսը և կաշին զանազան բաների համար են գործ դնում։ 4. Յովազ. Ամերիկայի յափշտակողներից ամենախոշոր և սարսափելին է. ծածկուած է սև բծերով. կարմիր դեղնագոյն մորթ ունի. մեծութեամբ վագրի չափ է. ցերեկը թագչում է անտառներում, գիշերները դուրս է գալիս որսի. ոյժով առիւծին և

վագրին հաւասար է. կերակրվում է ամեն տեսակ կենդանիների մսով. հօտերին շատ վնասներ է տալիս. 5. Կոատի. 6. Մշկային Խոյացուլ փոքրահասակ է. կարճ ոտներով, ծածկուած է երկայն բրդով. ապրում է հիւսիսային Ամերիկայում. միսը զզուելի մշկային հոտ ունի, այնուամենայնիւ տեղացիք նորա միսը ուտում են. կաշիից կօշիկներ են կարում։ 7. Սկունք. ապրում է բացառապէս հիւսիսային Ամերիկայում. մեր աչքերից զանազանվում է գլխաւորապէս իւր սեւ, երկայն, փայլուն մորթով։ 8. Ջրաղացուկ. հասակով միջակ է. գտանվում է հիւսիսային Ամերիկայի անտառներում. ուտում է ամենայն տեսակ կերակուր. բայց աւելի նախադասում է մսեղէնը. շատ սիրում է ջրի մէջ լողալ. զանազան ծաղրածութիւններ է անում մանաւանդ եթէ ընտանեցրած է, իսկ ընտանի դառնում է շատ հեշտ. միսը գործածվում իբրեւ կերակուր. մորթին մուշտակի համար։ 9. Լամա. հասակով մեծ ոչխարի չափ է. կենում է հարաւային Ամերիկայում. սպիտակ գոյն ունի. նորա պահումեն մեծ հօտերով, գործեն դնում բեռը կրելու համար։ 10. Դանդաղաշարժ ապրում է հարաւային Ամերիկայի թանձր անտառների ծառերի վերայ. կերակրվում է ծառերի ճիւղերով, տերեւներով, բողբոջներով. անունը ստացել է նորանից, որ ամբողջ օրեր կամ շաբաթներ ծառերի վերայ ընկած է մնում. միայն ամենասոված ժամանակ ծառից ցած է իջնում։ Ա. Հնդկական գիւղ։

# ՑԱՆԿ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ

## ԵՐԿՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

### ԱՍԻԱ

1. Հայուհի (Կարինից). Հայ (Թիֆլիսից). Իմէրէլ. Հայ (Ղարաբաղից). Լէզգի.
2. Պարսիկ. Տաճիկ. Արաբ. Թուրքմէն.
3. Թաթար (Բագուից). Պարսիկ (Իսպահանից). Չինացի. Հնդկացի
4. Ջապոնացի, Ասորի. Հրէա, Մալայ.
5. Բաշկիր, Քուրտ, Ղալմուխ, Ղրղզ.

### ԵՒՐՈՊԱ

6. Ռուս, Լեհ, Գերմանացի, Ֆրանսիացի.
7. Ղարադաղցի (Սեւ լեռնացի). Ցոյն, Բոշա, Անգլիացի.

### ԱՓՐԻԿԱ

8. Նեգր, Ֆէլլահ (Եգիպտոսից). Ալժիրցի, Քաֆր.
9. Մանգանգէ այր եւ կին միջին Ափրիկայից, Զուլու (Նատալից). Բուշման հարաւային Ափրիկայից.

### ԱՄԵՐԻԿԱ

10. Ամերիկացի ագռաւային, (այսպէս կոչվումեն նորա համար որ իւրեանց գլուխը զարդարումեն ագռաւի փետուրներով). ամերիկացի օձային (այսպէս կոչվումեն նորա համար, որ պարապումեն օձ պարածելով եւ օձի որսորդութեամբ.) Պերուացի: Պատագոնացի։

### ԱՒՍՏՐԱԼԻԱ

11. Զելանդացի, Աւստրալիացի Պապուաս.

## ԵՐԿՐԻ ԲՈՅՍԵՐԸ ԵՒ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ

12. Ասիայի նշանաւոր բոյսերը եւ կենդանիները.
13. Ափրիկայի նշանաւոր բոյսերը եւ կենդանիները.
14. Ամերիկայի նշանաւոր բոյսերը եւ կենդանիները.
15. Ցամաքի եւ ջրի զանազան մասերն եւ ձեւերը։ Երկրի ընդաձեւութեան ապացոյցներ: Արեգակի եւ լուսնի խաւարումը։



1. Հայուհի (Կարինեց).



2. Հայ (Թիֆլիսեց).



3. Իմէրէլ, 4. Հայ, 5. Լէզգի.

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ-ССРА.
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ





6. Պարսիկ.



7. Տաճիկ.



8. Արաբ.



9. Թուրքմէն.

# ԱՍԻԱ



10. Թաթար (Բագուեց).



11. Պարսիկ (Իսպահանեց).



12. Չինացի.



13. Հնդկացի.

ՀՍԽՀ-ССРА
им. А. Мясникяна



14. Ճափոնացի.



15. Ասորէ.



16. Հրեայ։



17. Մալայ.

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССРА.
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ





18. Ղալմուխ. 19. Բաշկիր. 20. Ղըրղզ.



21. Քուրդ.

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публ. Библиотека
ՀՍՍՀ-ССР А.
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ





22. Ռուս.



23. Լեհ.



24, Գերմանացի.



25. Ֆրանսիացի.



26. Ղարադաղ ցի (Սև լեռնացի).



27. Յոյն.



28. Բօշա



29. Անգղիացի.

ՊԵՏ. ՀԱՆՐԱՊԵՏ. ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ-ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ





30. Նեգր.



31. Ֆէլլահ (եգիպտոսից).



32. Ալժերցի



33. Քաֆր.

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССРА.





34. Մանգանջէ (միջին Ափրիկայից).



35, Զուլու (Նատալից).



36, Բուշման (հար. Աֆրիկայից).

## ԱՄԵՐԻԿԱ



37. Ամերիկացի (ագռաւային).



38. Ամերիկացի (օձային).



39. Պերուացի



40. Պատագոնացի.

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССР А.
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ





41. Զելանդացի.



42. Աւստրալիացի.

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССР А.
Им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ





43. Ասիայի նշանաւոր բոյսերը և կենդանիները։

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССРА.
ИМ. А. Мясникяна
ԱՆՎԱՆ





44. Աֆրիկայի նշանաւոր բոյսերը, կենդանիները ու բնակչաց բնակարանը։

Гос. Публ. Библ. отдел
ՀՍՍՀ-ССР
Им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ





45. Ամերիկայի նշանաւոր բոյսերը, կենդանիները ու բնակչաց բնակարանը։

Гос. Публ. Библ.
ՀՍՍՌ-ССР А.
им. А. Мясникяна
Ա. Մյասնիկյանի անվան





46. Ծով, կղզի, Նեղուց, Թերակղզի, Ծոց, Նաւահանգիստ, երկաթուղի.



47. Երկրի գնդաձեւութեան ապացոյցներ.



48. Արեգակի և Լուսնի խաւարումը.

ՀԱՅ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

7287

0003405

2013

ՀՀ Ազգային գրադարան

NL0003405